ՆՈՐ-ԴԱՐ

№ 121 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 27 Յուլիսի 1901 Ուրբաթ, 27 Յուլիսի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 121

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Նպատակայարմար դիտողութիւններ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Մոզդոկից։ Ջամախուից։ Դոմբարից։ Խալթանից։ Սալմաստից։ Թաւրիզից։
Սխալ եզրակացութիւն։
Թղթակցութիւններ.—Նամակ Գերմանիայից, Հալլէ։
Ճանապարհորդի տպաւորութիւններից։
Մի նոր փորձ Թոքախտի դէմ։
Քաղաքական.—Թիւրքիա։ Չինաստան։ Հարաւային-Աֆրիկա։
Հեռագրական լուրեր։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 26 յուլիսի 1901 թ.

ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր պարբերական մամուլին հետեւողը կարդում է Շուշու և Երևանի թեմական դպրանոցներին վերաբերեալ բազմաթիւ յարձակողական թղթակցութիւններ, ասես թէ խնդիրը դպրանոցներին, և այն՝ հոգևոր դպրանոցներին չլինի վերաբերում։ Եթէ մենք համաձայնէինք հրատարակել այն ամենը, ինչ որ մեզ ուղարկում են տպագրելու յանուն ճշմարտութեան և անկողմնակալութեան յիշեալ դպրանոցների վերաբերութեամբ, պէտք է որ մեր թերթի էջերի մեծ մասը շարունակ զբաղուած լինէր յիշեալ դպրոցների վերաբերեալ թղթակցութիւններով։

Պէտք է խոստովանել, որ յիշեալ դպրանոցների մասին մեզ ուղարկուած թղթակցութիւնները յարձակողական չեն, այլ պաշտպանողական, գործը, դէպքը, յեղաշրջուած եղելութիւնը լուսաբանելու բնաւորութիւն ունեն։

Բայց մենք հրաժարուել ենք այդ ամենը հրատարակելուց և եթէ յիշեալ դպրանոցների մասին միորեւէ թղթակցութիւն տպել ենք, այդ արել ենք հարկից ստիպուած՝ կլինտոյական յարձակումների դէմ պաշտպանուելու ջանքն աւելորդ աշխատանք համարելով։

Այդ և այնպէս փաստը մնում է փաստ, և պէտք է արձանագրել, որ մեր մէջ նոյն իսկ հոգևոր դպրանոցները փողոցի, ամբոխի քննութեան են ենթարկւում։

Սրանից տասը և աւելի տարիներ առաջ «Նոր-Դար»-ը մի շարք առաջնորդողներով իւր դիտողութիւններն է արել հայոց հոգևոր ծխական և թեմական դպրանոցների մասին։ Մենք այն ժամանակներում արդէն ցոյց ենք տուել, որ հոգևոր դպրանոցները պէտք է կառավարուեն ս. Էջմիածնից, որ այդ դպրանոցները պէտք է որոշ ուղղութիւն ունենան, որ հոգևոր դպրոցները պէտք է կառավարուեն հոգևորականներով և մի անգամ որոշուած ծրագրով, որ հոգաբարձութիւնները կոչուած պէտք է լինեն շատ գեղեցիկ գործ կատարելու, այն է՝ դպրանոցի տնտեսական մասը կառավարելու, որ ամբոխից ընտրուած հոգաբարձութիւնների մէջ կարող են գտնուել այնպիսի բարձր արժանաւորութեան տէր անհատներ, որոնք ոչ միայն մի դպրոց, այլև մի քաղաք, գուցէ և իբրև մինիստր ամբողջ երկիր կառավարելու ընդունակութիւններով օժտուած կլինեն, բայց ամբոխից ընտրուած (գիտենք էլի, թէ ով է ընտրողը և ինչպէս է ընտրում ժողովուրդը հոգաբարձու) պատահական հոգաբարձուները ձեռնհաս չեն և չեն կարող հոգևոր դպրանոցների ուսումնական մասը կառավարել, ուսման պրոգրամ խմբագրել, ուսուցիչներ հրաւիրել կամ արձակել։

Այնուամենայնիւ մեզ չկամեցան լսել. խոհեմ, ապագան գուշակող ձայնը մնաց ձայն բարբառոյ յանապատի։

Այսօր մեր երկու-երեք թեմական դպրանոցները կարծես թէ ծանր բեռ լինէին մեր ժողովրդի և եկեղեցու վրայ դրուած, անվերջ վէճերի կրկես են դարձել, և միշտ քանդող ու ոչինչ չշինողներն առանձին եռանդով զբաղուած են այդ դպրոցներով, մինչև որ կհասնեն իրենց նպատակին և կհասցնեն այն երկու և կէս դպրոցն անկման աստիճանին։

Տեսնելու բան է, թէ ինչպէս հոգևոր դպրանոցի հոգևորական տեսուչն անդադար ու անընդհատ վտարանւում և անզգամ յարձակումների է ենթարկւում, որովհետև հոգևորական է. իսկ հոգևորական դպրոցի բոլորովին անյայտ բժիշկ տեսուչը, որի գոյութիւնն այսօր առաջին անգամն ենք իմանում, և որը ոչ հայերէն գիտէ և ոչ հոգևոր դպրանոցի մասին գաղափար ունի, փառաբանւում եւ պաշտպանութիւն է գտնում. և այդ բժիշկ-տեսուչն իւր անյաստակ անընդունակութեամբ և պաշտօնին անյարմարութեամբ հանդերձ՝ այնքան լաւ է, որ խօսքի տէր մարդ է, իրեն պաշտօնի հասցնողներին չէ ուրանում և պաշտօն է տալիս միայն նրանց, որոնք իրենց մարդիկն են, թէկուզ իբրև ուսուցիչ անընդունակ լինեն և անպէտք, և արձակում է փորձուած ուսուցիչներին, պիտանի ուսուցիչներին, որոնք, դժբաղդաբար, ինչպէս ինքն հոգևոր դպրանոցի աշխարհական պատահական տեսուչն է ասում անկեղծութեամբ, իրենց բանակի մարդիկ չեն։

Եւ այս կռիւը հոգևոր երկու ու կէս դպրոցների մասին շարունակւում է. և այդ մասին երևի խաղաղութիւնը կվերականգնուի գերեզմանատանը։

Սա շատ ցաւալի է, աւելի ցաւալի, որ լուրջ և նպատակայարմար ազդարարութեան վրայ ուշադրութիւն դարձնող չկայ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հանգուցեալ Դր. Թումանեանի որդիքը, ինչպէս հաղորդում են մեզ ս. Էջմիածնից, 4000 ր. են նուիրել Գէորգեան ճեմարանի համար հիւանդանոց կառուցանելու նպատակով։

— Սինոդի նախանդամ գեր. Արիստակէս արքեպ. Դաւթեանին շնորհուած է Ստանիսլաւի առաջին կարգի շքանշանը։

— Ալէքսանդրապոլի յաջորդ է նշանակուած բարձ. Մամբրէ վարդապետ։

— Կովկասեան ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովի մէջ խնդիր է յարուցուած ցուցահանդէսը բանալ, փոխանակ օգոստոսի 20-ին, սեպտեմբերի 1-ին։

— Յուլիսի 25-ին, գիշերուայ ժամը 3-ին, Թիֆլիսի երկաթուղու կայարանում հրդեհն անխնայ կերպով լափեց ստացուած ապրանքների պահեստները և տասներկու ապրանքատար վագոններ։ Կրակն սկսուել է պահեստի մի մասից։ Վնասն ահագին է։ Կրակն սկսուելու պէս շոգեկառքերի և երկաթուղու արհեստանոցի սուլոցներից արթնացած բանուորներն իսկոյն հասան օգնութեան, բայց ջուր չլինելու պատճառով անմիջապէս չկարողացան գործի սկսել։ Զարմանալին այն է, որ, չնայած ջրանցքների կանոնաւորութեանը, նրանց մէջ ջուր չկար, և օգնութեան հասնողներից ոչ մէկը չէր իմանում, թէ որտեղ է գտնւում ջրի գլխաւոր փականը. մինչդեռ հրդեհը հետզհետէ լայն ծաւալ էր ստանում և շարունակւեց մինչև առաւօտ։ Եթէ աշխատաւորները գիտենային ջրի փակի տեղը, իրենց ցոյց տուած եռանդուն աշխատանքով և ձեռներին ունեցած կատարելագործուած հրշէջ գործիքներով, կարող էին բոլէապէս հանգցնել հրդեհը։ Նրանք չկարողացան նոյն իսկ պահեստի մօտ եղած վագոնները, բացի երկուսից, հեռացնել այնտեղից, կրակին բաժին չդարձնելու և հրդեհին չնպաստելու համար։ Եթէ չհեռացուէին այդ երկու վագոնները, հետևանքը սարսափելի էր լինելու, որովհետև այդ վագոնները լիքն էին վառօդով և գտնւում էին նաւթի և մազութի ահարկու պահեստների դէմ առ դէմ։ Հրդեհն սկսուելուց մի ժամ յետոյ եկան Թիֆլիսի հրշէջները, որոնք աշխատում էին ոստիկանապետի առաջնորդութեամբ։ Մահուան դէպքեր չկան, բայց վնասուած մարդիկ շատ կան։ Վնասը հասնում է մօտ մի միլիոն րուբլու։

— Ներսիսեան դպրոցում նոր աշակերտների քննութիւններն սկսուելու են սեպտեմբերի 5-ին։ Թիֆլիսի բոլոր գիմնազիոններում նոյն քննութիւնները նշանակուած են օգոստոսի 20-ին, և 21-ին, իսկ ուսումը կսկսուի սեպտեմբերի 1-ին։

— Արմաւիրում տեղական երեխանց խնամատար ընկերութեան ձեռներէցութեամբ սեպտեմբերի 1-ից բացուող աղջկանց պրոգիմնազիոնում անպարտադիր առարկաների թւում աւանդուելու են հայոց, ֆրանսերէն և գերմաներէն լեզուները։

— Վերջին ժամանակս անսովոր կերպով բարձրացել են խաղատոմսերի գները։ Այդ առթիւ լրագրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում բոլոր երեք փոխառութեանց շրջանառութեան մէջ գտնուած խաղատոմսերի թուերի մասին։ Առաջին փոխառութեան խաղատոմսերից շրջանառութեան մէջ գտնւում է դեռ ևս 670,400 հատ, երկրորդ փոխառութեան խաղատոմսերից—697,100 հատ և երրորդ փոխառութեան — նոյնպէս 697,100 հատ։ Մերձակայ տիրաժներին պիտի շրջուեն միջին թւով իւրաքանչիւր 1000 տոմսին՝ առաջին փոխառութիւնից 11,2 տոմս, երկրորդ փոխառութիւնից—16,2 տոմս և երրորդ փոխառութիւնից — նոյնպէս 16,2 տոմս։ Այս թուերի հիման վրայ էլ ներկայումս բանկերն ու բանկային գրասենեակները նոր, բաւական բարձր վճարումներ են նշանակում խաղատոմսերի ապահովագրութեան համար։

— Ինչպէս յայտնի է, Գանձակ նահանգի Զուռնաբադ գիւղում անասնաբուժական կայարան է հիմնւում, կենդանիների ժանտախտի դէմ գործադրուող շիճուկ պատրաստելու համար։ Ներքին գործերի մինիստրութիւնը, բացի առաջուց այդ բանի համար յատկացրած գումարից, վերջերս դարձեալ 4,000 ր. է յատկացրել կայարանի շէնքի կառուցումը վերջացնելու համար։

— Ս. Դաւթի լերան վրայ ֆունիկուլեօր շինելու և շահեցնելու գործը յանձն է առել Թիֆլիսի ձիաքարշ երկաթուղու բելգիական ընկերութիւնը։ «Նով. Օբ.» հաղորդում է, որ յիշեալ ընկերութիւնն այդ նպատակով մի ջոկ ընկերութիւն է կազմում մի միլիոն ֆրանկ դրամագլխով. փայերի ընդհանուր թւի կէսն առաջարկւում է տեղական կովկասեան դրամատէրերին, եթէ վերջիններս համաձայնեն մասնակցել այդ գործին։ Իսկ փայատէրերի ընդհանուր ժողովները տեղի են ունենալու Բրիւսելում։

— Այս օրերս Թիֆլիսում բռնուած է մի նշանաւոր աւազակ, Ալէքսանդր Լորդկիպանիձէ անունով։ Անցած տարի հոկտեմբերին Քութայիսի նահանգական դատարանը նրան դատապարտել էր չորս տարուայ տաժանակիր աշխատանքների, բայց այն միջոցին, երբ նրան դատարանից վերադարձնում էին բանտը, կարողացել էր փախչել և չբռնուել։ Փախչելուց յետոյ նա կատարել է հետևեալ ոճրագործութիւնները։ Քութայիսում յարձակուել է մի տան վրայ և յափշտակել է 1,500 ր. զանազան իրեղէններ և 700 ր. դրամ։ Քութայիսի գաւառի Խոնի գիւղի ճանապարհին կողոպտել է մի քանի հրէայ մանրավաճառներ, խլելով մօտ 400 ր.։ Բաղդադ գիւղի ճանապարհին նոյնպէս կողոպտել է դարձեալ մի քանի հրէայ մանրավաճառներ և խլել է մօտ 700 ր.։ Խոնի գիւղի շրջակայքում յարձակուել է չարվադարների վրայ և խլել է 200 ր.։ Սվիրի գիւղում յարձակուել է խանութպանի վրայ և ափշտակել է 2000 ր.։ Նոյն գիւղում մի ուրիշ անգամ կողոպտել է դարձեալ մի խանութ, տանելով 4,000 ր.։ Բաթումում յարձակուել է Ռոտշիլդի ֆիրմայի արտելշչիկի վրայ և յափշտակել է 15,000 ր.։ Իսկ սրանից մի երկու շաբաթ առաջ Թիֆլիսում կողոպտել է Ծատուրեանի խանութը Դվորցովայա փողոցի վրայ, տանելով 4,500 ր.։ Այս վերջին խանութը կողոպտում է հետևեալ կերպով։ Խանութի վերևը գտնւում է «Վիկտորիա» հիւրանոցը։ Այս հիւրանոցում, հէնց խանութի գլխին, մի սենեակ է վարձում, գիշերով քանդում է յատակը և խանութի առաստաղը ծակելով թոկով իջնում է ներքև։ Փողերն ու թանկագին իրեղէնները վերցնելուց յետոյ նոյն ճանապարհով բարձրանում է վերև և առաւօտեան չքանում հիւրանոցից։ Նա 28 տարեկան է, մի քանի անգամ ընկել է ոստիկանութեան ձեռքը, բայց միշտ էլ կարողացել է փախչել։ Նա ձերբակալուած է իւր բնակարանում Արսենալի զառիվայրի վրայ, Թումանովի տան մէջ։ Յուլիսի 23-ի գիշերը ոստիկանութիւնը դարան է մտնում այդ տան մէջ։ Ժամը մօտ 12 ին Լորդկիպանիձէն տուն է գալիս իւր սիրուհու, ոմն Աննա Արաբիձէի հետ։ Բակի դուռը բաց է անում հագուստը փոխած մի ոստիկան։ Աւազակը, ոչինչ չկասկածելով իւր սիրուհու հետ մտնում է իւր սենեակը և դուռը փակում։ Քիչ ժամանակից յետոյ նա դուրս է գալիս ջուր ներս տանելու։ Այդ միջոցին դարան մտած երկու ոստիկան յարձակւում են նրա վրայ և զինաթափ անում։ Բայց աւազակը մի ուժեղ հարուածով դէն է շպրտում նրանցից մէկին, իսկ միւսի կոկորդից բռնում և սկսում խեղդել, մինչև որ ազատւում է նրա ձեռքից և ուզում է թռչել բակի վանդակապատից դէպի փողոց։ Սակայն այդ միջոցին ոստիկանը պինդ բռնում է նրա ոտից, ցած է գլորում, վայր ձգում գետնին և կրծքին նստում, մինչև որ թոկ են հասցնում և կապկապում։ Ներկայումս աւազակը բանտումն է։ Նրա մօտ և բնակարանում գտնուած են զանազան զէնքեր։

— Մինչև այս տարուայ յուլիսի 1-ը Ռուսիայում գործում էին 325 օտարերկրեայ ակցիոներական ընկերութիւններ աւելի քան 27 միլիոն րուբլի դրամագլխով։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՄՈԶԴՈԿԻՑ.—Աստրախանի հոգ. իշխանութեան արած կարգադրութեան պտուղներն արդէն վայելում ենք։ Ս. Ստեփ. եկեղեցու միակ քահանային Աստրախան տեղափոխելուց յետոյ, միւս եկեղեցու քահանային նշանակեցին նրա տեղ, թողնելով ս. Աստուածամօր եկեղեցին ծերունի քահ. յոյսով, որը ս. պատարագի ժամանակ երկու անգամ ուշաթափուեց, իսկ շաբաթուայ մէջ ժամերգութիւնը խափանուեց։ Այս դէպքը ծանր տպաւորութիւն է թողել ծխականների վրայ, որոնք լցուել են արդար բարկութեամբ, քանի որ իշխանութիւնը 5—600 տուն ժողովրդին թողել է 2 քահանայի յոյսով։ Ի՞նչ կանենք, եթէ ծերունի քահանան առաջիկայ ս. Աստուածածնի տօնին կրկին հիւանդանայ. պէտք է ս. պատարագը խափանուի։ Թող իշխանութիւնը մտածէ այդ մասին և ոչ թէ իւր սիրելիների «ապագան» ի նկատի ունենալով նեղացնէ ժողովրդին։

—

ՇԱՄԱԽՈՒՑ.—Վերջին մի քանի տարուայ ընթացքում Շամախու շրջակայ գիւղերն ազատ էին դաշտային մկներից, բայց այս տարի մի քանի գիւղերում երևացին այդ աւերիչ կենդանիները։ Մկներն աւելի մեծ քանակութեամբ երևացել են Շամախուց հինգ վերստ հեռաւորութեան վրայ հիւսիս-արևելեան կողմում գտնուող մալականների Չարանի գիւղում. բայց բարեբախտաբար զգալի վնասներ չեն հասցրել։

—Միևնոյն Չարանի գիւղից երկու վերստ հեռու դեռ անցեալ տարուանից մալականները գտել են մի նաւթային հանք։ Մինչև այս տարի այդ հանքի նաւթը շատ սակաւ էր, բայց, շնորհիւ վերջերում տեղացող հեղեղների, այն ճեղքը, որտեղից առաջին անգամ երևացել էր նաւթը, այնքան է լայնացել, որ միևնոյն տեղից այժմս մեծ քանակութեամբ նաւթ է հոսում, այնպէս որ այդ նաւթից օգտւում են շրջակայ մի քանի գիւղերի բնակիչները։ Շամախու նորա կազմ նաւթարդիւնաբերական ընկերութեան կողմից հրաւիրուած ինժեները մինչև անգամ կամենում էր առաջին վիշկան այնտեղ դնել. սակայն քաղաքացիք արգելք հանդիսացան այդ բանին։

—«Շամախի» ընկերութեան վիշկան, որը դրուած է արևելեան կողմում քաղաքին կից հոսող գետի ափին, աւարտելուն մօտ է։ Յուլիսի 14-ից սկսել են փորելու համար մեքենաներ բերել Բագուից։

—

ԴՈՄԲԱՐԻՑ.—Այսօր, յուլիսի 24-ին, ամբողջ Դոմբարում ծանր տպաւորութիւն թողեց մի դժբաղդութիւն։ Մի փոքրիկ տղայ, Վ., սպանեց իւր ռեպետիտոր Գ.-ին, որը Բագուի գիմնազիօնի աշակերտ էր 17 տարեկան։ Այս դէպքին ականատես Քութայիսի նահանգի բնակիչ Մ. հետևեալ կերպով է պատմում եղելութիւնը։ Նա Վ.-ի և Գ.-ի հետ միասին առաւօտեան ժամը 8-ին գնում է դարբնանոց իւր կառքը նորոգել տալու համար։ Դարբնանոցում ոչ ոք չի լինում և Մ.-ն սկսում է ինքը նորոգել իւր կառքը։ Այդ միջոցին Վ. տղան դարբնանոցում գտնում է մի հին հրացան, որ բերուած է լինում նորոգելու համար։ Գ. գիմնազիստն սկսում է փուքսը փըչել, իսկ Վ.-ն կատակով հրացանը դէմ է անում նրան։ Մ.-ն բարկանում է նրա վրայ և ուզում է հրացանը խլել նրա ձեռքից։ Բայց այդ միջոցին հրացանը պայթում է։ Գնդակը դիպչում է գիմնազիստ Գ.-ի ճակատին և տեղնուտեղն սպանում։

—

ԽԱԼԹԱՆԻՑ (Ղուբայի գաւառ).—Շնորհիւ տեղիս հանքային ջրերի բուժարար յատկութեան, այս տարի մի քանի ընտանիք ամառանոց եկողներ կան. նրանց մէջ կան մի քանի հիւանդներ, որոնք ուղարկուած են զանազան տեղերից բժիշկների խորհուրդով։ Հիւանդները մի քանի օր լողանալուց յետոյ բաւականին փոփոխութիւն են զգում դէպի լաւը։

—

ՍԱԼՄԱՍՏԻՑ.—Սալմաստում վերջերս հայ ենիչերիների կատարած սխրագործութիւնները վերջ չունին. միմեանց կոտորելը սովորական երևոյթ է դարձել։ Այս օրերս Հափթուան գիւղում սպանուեց երկու թրքահայ։ Գիւղացիք, այլևս տանել չկարողանալով այդպիսի գազանութիւնները, լցուեցին Դիլիման քաղաքի հեռագրատունը և հեռագրով բողոքեցին Թաւրիզ՝ նահանգապետին ու առաջնորդարանին. Թէև նահանգապետից հրաման ստացուեց Սալմաստի իշխանութեան վրայ, որ սրիկաներին վըռնեն Սալմաստից ու գիւղացիներին մեղաւոր չճանաչեն, բայց էլի սարփաքաստը 50 թուման տուգանք առաւ հափթուանցիներից։ Եթէ նահանգապետի հեռագիրը չլինէր, անտեղի տուգանքը հարիւրների կը հասնէր։ Սալմաստի հայ բնակչութեան դրութիւնը կրիտիկական է։

—

ԹԱՒՐԻԶԻՑ.—Թաւրիզին մօտիկ գտնւում է Ալչամուլը հայաբնակ փոքրիկ գիւղը, որ երբեմն ամառանոցի տեղ էլ է ծառայում։ Մօտ օրերս յիշեալ գիւղից Թաւրիզ էր գալիս մի հայ. 5 աւազակներ յարձակւում են այդ հայի վրայ. հայն ատրճանակով պաշտպանում է իրեն, որի ժամանակ աւազակներից մէկը վնասւում է ոտքից գնդակ ստանալով։ Աւազակները Թաւրիզ գալով, բողոքում են կառավարութեան. հայը, ինչպէս երևում է, տուգանքի կենթարկուի, որովհետև իրեն պաշտպանել է։

ՍԽԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

—

Որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ։
«Աւետարան».

Մեր ժամանակի բարքերն այն աստիճան վատթարացած են, որ մի կարգ մարդիկ կարծում են, թէ ուրիշներն ստեղծուած են նրանց խնկարկելու։ Նրանք համոզուած են, որ իրենք ո՛չ թէ ամենքի հետ են ստեղծուած միևնոյն կաւից, այլ՝ առանձին. ասես թէ արևի խնամիքը լինեն։ Աստուած մի արասցէ, եթէ դրանց ասէք «աչքերիդ վերևը յօնք կայ», մինչև «հին Աստօծը» պատրաստ են խաւներիցդ ընկնելու։ «Ես իմն ասեցի. հիմա դուք էլ ձերն ասացէք. տեսնենք թէ բանից ինչ բան է դուրս գալիս»։

Այդպէս է վերջացնում պ. Սեդրակ Մանդինեան իւր՝ «Նոր-Դար»-ի 109-րդ համարում գետեղած նամակը։ Բայց այդպէս է արդեօք։ Արդեօք ես ըմբշամարտի եմ հրաւիրել նրան։ Իմ քննադատութիւնից այդպիսի բան երեւում է։ Ես գոնէ ո՛չինչ տրամաբանութիւն չեմ գտնում նրա այդպիսի վարմունքի մէջ։ Երկու խօսքով քննադատելով նրա «Փարբարի քարոզներ» խորագրով թարգմանութիւնը՝ ես հանել եմ այդ գրքի միջից մի շարք՝ տգէտների համար չնչին, գիտունների համար խոշոր, բայց իւր համար աննկատելի սխալներ, ու դրել հրապարակի վրայ։ Նա մի խօսք անգամ չէ ասում իմ մատնացոյց արած դիտողութիւնների դէմ։ Չէ հերքում նրանցից ո՛չ մէկը՝ այդ բառի թուաբանական մտքով, այլ «սուսուփո՜ւս» ընդունում է բոլոր դիտողութիւնները։ Այդ այդպէս լինելուց յետոյ՝ էլ նամակ գրելու ի՞նչ կարիք կար։

Ի՞նչպէս չկար։ Մարդիկ կան, որոնց կրծքի տակ թագաւորի սիրտ կայ։ Հեշտ բան չէ նրանց խաղաղութիւնը վրդովելը։ Այո, իմ մէկ խօսքը, և միմիայն մէկ խօսքը խորապէս վիրաւորել է իմ ընդդիմախօսի ինքնասիրութիւնը։ «Աստուած սիրէք, խնայեցէք հայոց լեզուին»։ Ահա այդ խօսքը։

—Ի՞նչպէս թէ «խնայեցէք հայոց լեզուին», — բացականչում է նա վիրաւորուած թէ մատնախօսից և թէ խմբագրութիւնից —Այդ ի՞նչպէս պատահեց,—դիմում է նա վերջինին, — որ դուք չքաշեցիք նրա ականջները խմբագրական գէթ մի ծանօթութեան մէջ։ Ուրեմն, ես հեռանամ թարգմանչական ասպարիզից։ Է՛, ես էլ որ հեռանամ՝ էլ ո՞վ կըմնայ այնտեղ։

Եւ այդ տոնով նա շարունակում է իւր նամակը, չխնայելով ո՛չ իրեն, ոչ էլ իւր քննադատին և ընկ.։ Է՛լ Աղայեանց, էլ Պռօշեանց (որոնք ի՞նչ յանցանք ունէին) չէ մնում, որ այդ չարաբաստիկ խօսքի համար իրար գլխով չտայ։ Անակնկալելի իրարանցման մէջ՝ ես իմ անեկդոտներն եմ մոռանում, Աղայեանցն՝ իւր հէքիաթները, Պռօշեանցն իւր մասալները։ Եւ, ո՞վ հրաշք, երբ այդ բոլորը խառը բալում մաղում էք, ստանում էք մի խոշոր թիւրիմացութիւն, որի մասին անկեղծօրէն ցաւում եմ։ Այո, ճշմարտութիւնը իւր կշիռը չպէտք է կորցնի։

Բուն խնդիրը մի կողմը թողած, պ. Մանդինեանը մի մեծ տաշտ խմոր է դրել առաջս։ Սակայն ես չեմ ուզում հաւատալ, որ նա ինձ հարկադրել հունցել մի խմոր, որ շա՜տ ջուր կարող է վերցնել։ Այս պատճառով, համոզուած լինելով որ նա սխալուել է, այդ առաջարկութիւնն ինձ անելով, ես ո՛չինչ չեմ ուզում պատասխանել նրա տաք-տաք, բայց միանգամայն անտեղի հարցերին ու պահանջներին։

Ասելով «խնայեցէք հայոց լեզուին», իմ պ. ընդդիմախօս, ես երբէք միտք չեմ ունեցել հասկացրած լինելու, որ դուք ցած դնէք գրիչներդ. շա՜տ ունինք բանիբուն գրողներ։ Եւ եթէ այդ լինէր նպատակս, ինչը կարող էր արգելք լինել ուղղակի ասելու այն։ Ես միմիայն ցանկանում եմ, որ ձեր գրչից, և այն այդպիսի ընտիր երկերի յաջորդ թարգմանութիւնները զերծ լինէին իմ մատնացոյց արած թերութիւններից, որոնց գոյութիւնը թարգմանական լաւ կտորների մէջ ո՛չ ձեզ է պատիւ բերում, ոչ գրականութեան։ Ո՞չ պարզէն ո՛վ «պատասխանատուութիւն» ունի, ո՛ւմ շատ է տրուած՝ նրանից շատ կըպահանջուի։

Դուք վրայ էք տալիս. «Ուրեմն, ես այնքան վատ եմ թարգմանում, այնպէս քիչ եմ ծանօթ իմ լեզուի ոգուն, որ «փուրգոնի» վրայ իւր տաղանդը մաշող հէգ բանաստեղծին եմ նմանւում»։ Ո՞վ է ասում։ Իմ դուրս բերած՝ ձեր թարգմանական գոհարները բոլորովին ուրիշ բան են ապացուցանում։ Երբ գրում էք՝ «եթէ ուրանաք նրանից», «մեղքը կարող է սևից սպիտականալ», «հայրս ինձ դարձրեց մենակ», «պէտքալի ցանկութիւնը այնպէս չերևալ» և մասամբք սոցին, —պակա՞ս էք յիշեցնում մեր հայախօսութեան ոսկեդարը։

Ես առանց հաճոյախօսութիւնների եմ ասում։ Տուէք մեզ, ո՛րքան կարելի է, շատ թարգմանութիւններ. բաժին հանեցէք մեր թարգմանական գործին եւրոպական մտքերի լոյսից, —մեծով փոքրով շնորհակալ կըլինենք ձեզնից։ Բայց դարձեալ կրկնում եմ, ի սէր ա՛յն գրականութեան, այն լեզուի, որի տակուն ու խոհուն պաշտօնեաներից մէկն էք դուք, խնայեցէք հայոց լեզուին։

Ըմմ. քահ. Նազարեան

Մոսկուա, 7 յուլիսի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

—

ՀԱԼԼԷ, 20 յուլիսի (ն. տ.).—Ցաւում ենք, որ տկարութեան պատճառով իւր ժամանակին չկարողացանք գրել «Նոր Դար»-ին «Գերմանական գիւղատնտեսական ցուցահանդէսի» մասին, որը տեղի ունեցաւ յունիսի 13—17 Հալլէում։ Թէ արդէն ուշ լինելու պատճառով և թէ ընթերցողներին չձանձրացնելու համար, խոյս կըտանք զանազան մանրամասնութիւններից և ստատիստիկաներից։ Վերոյիշեալ ցուցահանդէսը սարքում է «Deutsche landwirthschaftliche Gesellschaft» ընկերութիւնը ամեն մի 3 տարի Գերմանիայի զանազան քաղաքներում։ Այս անգամ էլ հերթը հասաւ Հալլէին, որն առանց այն էլ յայտնի է իբրև գիւղատնտեսութեան կեդրոնաքաղաք։ Ցուցահանդիսում ամենից առաջ աչքի ընկնողն էր գիւղատնտեսական մեքենաների և գործիքների բաժանմունքը, որը, կարելի է համարձակ ասել, կարող է մրցել ամերիկացոց գիւղատնտեսական մեքենաների հետ, որ մենք տեսել ենք Պարիզի համաշխարհային ցուցահանդիսում։

Կենդանիների բաժանմունքում ցուցահանուած անասունների մեծ մասն այսպէս ասած սերունդ տալու, առաջացնելու համար էր, քան, օրինակ, հեծնելու կամ լծելու։ Հիանալի էին լծկան հսկայ ձիերը, որոնց տեսակը մեզ մօտ բոլորովին չկայ և որոնցից ամեն մէկի ոյժը հասնում է մեր 2—3 ձիանց ոյժին եթէ մեզ մօտ «դրոգ»ին կամ փուրգոններին լծում են 4 ձի, այստեղ նոյն փուրգոնին, դեռ զոյգ էլ աւելի ծանր, լծում են միայն երկու։ Հրաշալի էին նոյնպէս Մեկլենբուրգ-Շվէրինի հեծնելու ձիանները, որոնք առաջին մրցանակն էին ստացել։ Շատ հետաքրքրական էր տաւարի բաժանմունքը. վիթխարի ցուլերն ու կովերը հիանալի էին. ցուլերի ոյժի մասին գաղափար կազմելու համար պէտք էր տեսնել, թէ ինչպէս խեղճերի քթից երկաթեայ օղակ էր անցկացրած նրանց զսպելու համար։ Մեր հարցին, թէ օրական ինչքան կաթ է տալիս ցուցահանուած կովերից ամեն մէկը, պատասխանեցին, թէ մի վեդրօ։ Խոզերի բաժանմունքը նոյնպէս քիչ հետաքրքրական չէր. սրանք աչքի էին ընկնում իրենց սարսափելի մեծութեամբ ու պարարտութեամբ. Յետոյ գալիս էին ոչխարների, այծերի, մեղուների և ուրիշ բաժանմունքները, որոնք մի առանձին հետաքրքրութիւն չէին շարժում։

Հ. Գեօղակեան

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

—

IV

ԳՄՈՒՆԴԷՆ, 10/23 յուլիսի.

Բնութիւնն իւր հրաշալիքները համահաւասար չի թափում. շատ անգամ մարդ ստիպուած է լինում գանգատուել այդ անորոշ և անզիջական աստուածութեան ագահութիւնից։ Սակայն և այն դէպքում, երբ նա առատ ձեռքերով է շնորհում իւր բարիքները՝ հարկաւոր է լինում, որ մարդն էլ իւր կողմից անմասն չթողնի այն, ինչ որ ներկայացնում է բնութիւնը։ Եւ որքան մեծ է այդ համերաշխութիւնը, այսինքն բնութեան առատաձեռնութիւնը և մարդկային աշխատանքը, այնքան մեծ և խոր տպաւորութիւն է գործում նա։ Տպաւորութեան խորութիւնը միայն էսթետիկայի հետևանք չէ, այլ այն գիտակցութեան, որ բանի բնութիւնն աւելի մշակուած է, այնքան, ուրեմն, նա աւելի յարմարեցրած է մարդուս պէտքերին։ Մարդկութիւնն ի ծնէ անար, բայց իւր ներքին աշխարհը մշակելուց, միշտ մշակել է և բնութիւնը, որպէս զի նրանից օգտուի։ Երբ այդ երկու մշակումն էլ համերաշխաբար յառաջադիմում են, մենք ասում ենք «մարդկութիւնը լուսաւորւում է», դա կուլտուրան է, որ մղում է առաջ մարդկանցով և ինքը իւր կողմից, ինքնաբերաբար և անգիտակցաբար, մղում է առաջ և մարդկութիւնը։ Այս խորհրդածութիւններն ինձ պաշարում են միշտ, երբ ես համեմատում եմ մեր երկրի բնութիւնը և Եւրոպայինը, իսկ միւս կողմից ա՛յն՝ ինչ որ արուած է մեզնում և այստեղ։

Գմունդէնը, որտեղից ես գրում եմ, գտնւում է Զալցկամերգուտ կոչուած «երկրամասում»։ Աւստրիայի արևմտեան կողմն է Զալցկամերգուտը, Բաւարիայի սահմաններին մօտ, Տիրոլից մի քիչ հիւսիս-արևելք, Զալցբուրգ, Միւնխէն, Լենց և Ինսբրուկ քաղաքներով շրջապատուած։ Տրաուն գետը՝ պտոյտներ անելով, սարէ-սար իջնել ելնելով, լճերից անցնելով, քաղաքներին և գիւղերին քսուելով—ծածկում է իւր ցանցերով ամբողջ Զալցկամերգուտը։ Այստեղ կայ Տրաուն գետ, Տրաուն լիճ, Տրաուն սար, Տրաուն ջրվէժ, Տրաուն գիւղ, Տրաուն եկեղեցի։

Ո՞ր բանը որին է տալիս իւր անունը— ես չիմացայ և չհասկացայ, միայն ամեն օր հիանում եմ նրանցով, այնքան գեղեցիկ են նրանք։ Զալցկամերգուտում բազմաթիւ մեծ ու փոքր լճեր կան՝ Կամերզէէ, Վոլֆգանգզէէ, Մոնդզէէ, Տրաունզէէ և այլն։ Սրանցից վերջինը կոչւում է նաև Գմունդէնզէէ, որի ափին և գտնւում է Գմունդէն բուժավայրը։

Գեղեցիկ է և չքնաղ այս փոքրիկ քաղաքի դիրքն ու շրջակայ բնութիւնը։ Բաց պատուհանից ես տեսնում եմ մուգկանաչ լիճը, որը մի կողմից շրջապատուած է՝ Գրիւնբերգ, Տրաունշտէյն, Էյրէն Գիրգ և Շենբերգ (2093 մետր) լեռներով, միւս կողմից անտառածածկ բլրակներով, Օրտի հնադարեան ամրոցով, Ալտմինսդորֆ գիւղով, Տրաունկիրխէ եկեղեցով և այլն։ Լեռների ստորոտներում, միմեանցից հեռու-հեռու ցրուած երևում են գիւղացիների տներ և սպիտակ-սպիտակ հիւրանոցներ. լեռների լանջերը մերթ բաց են և ցոլում են ժայռերով, մերթ ծածկուած են մուգկանաչ անտառներով։ Լճի վրայ նաւերի ու նաւակների երթևեկութիւնը չի դադարում ժամանակ առժամանակ լսւում են նաև երկաթուղու շոգեկառքերի սուլոցները՝ մէկը վերևից՝ լայն գծի վրայ, միւսը ներքևից՝ տեղական նեղ երկաթուղուց։ Կեանքը և երթևեկութիւնն սկսւում է վաղ առաւօտեան և վերջանում է ժամը 10-ին երեկոյեան։ Չպէտք է մոռանալ, որ Գմունդէնը բուժավայր է, այստեղ գալիս են թէ հանգստանալու և թէ բժշկուելու։ Թոքախտով հիւանդների համար կայ այստեղ և սանատորիա։ Շատերի ասելով, տեղիս օդն այդ տեսակ հիւանդների վրայ շատ լաւ է ազդում։ Անշուշտ նշանակութիւն ունի և հիւանդների անցկացրած կեանքը, որը (ինչպէս և առողջներինը) սահմանուած է sanatorium-ներում և պանսիօններում։ Պանսիօն ասելով պէտք է հասկանալ այնպիսի հիւրանոցներ կամ յատկապէս այդ անունը կրող մասնաւոր տներ, ուր իջնողը որոշ վարձատրութեամբ ստանում է ամեն ինչ որոշեալ ժամին։ Նա ստանում է առաւօտեան սուրճ, ժամը 12 ին կամ 1-ին ճաշ, ժամը 7-ին կամ 8 ին ընթրիք։ Այդ ժամերից առաջ ուզողը կարող է իւր հաշւով առանձնապէս տալ և խմել. ով որ ուշանում է, նոյնպէս ոչինչ չի ստանում և եթէ ուզենայ, իւր փողով կարող է իւր համար առանձին ճաշ կամ ընթրիք պատրաստել տալ։ Գիշերը որոշ ժամից յետոյ կարելի չէ ոչ երգել, ոչ նուագել, ոչ աղմուկ հանել։ Այս տեսակ «ժամով-ժամանակով» սահմանուած կենցաղավարութիւնը, բացի կարգ ու կանոնի սովորեցնելուց, ամենայնիւ առողջարար է—մարդս ախորժակով ուտում է և խմում, մարսում, լաւ քնում, ազատ միջոցին ման է գալիս, առողջարար օդն է ծծում և բնութեան գեղեցիկ տեսարաններով հիանում։ Կեանքն այստեղ թանկ չէ և յարմարեցրած միջին կարողութեան տէր մարդու կենցաղավարութեանը. Բայց և այնպէս այստեղի կեանքը և պանսիօններն էլի աւելի թանկ են քան Զուիցերիայում, ուր կարելի է միջակ հիւրանոցում 5—6 ֆրանկով (այսինքն 2—2 ր. 40 կոպէկով) օրական ստանալ՝ սենեակ, առաւօտեան սուրճ հացով, իւղով և մեղրով, կէսօրին ճաշ՝ չորս-հինգ տեսակ կերակուրներից և երեկոյեան ընթրիք նոյնքան կերակուրից բաղկացած։ Ուտելիքը և խմելիքը մաքուր, թարմ և շատ։ Կարելի է արդեօք նոյնը գտնել Մանգլիսում, Կօջորում, Բորժոմում և կամ Դիլիջանում... Գոնէ Կովկասի հանքային ջրերում և Ղրիմի հարաւային ափերի բուժավայրերում այդ գնով կամ ոչինչ չես ստանայ և կամ եթէ ստանաս՝ անպիտան մէկ բան մը։ Ես մինչև այժմս չեմ կարող մոռանալ ոչ Դիլիջանի հիւրանոցի կեղտոտ սենեակները, ոչ էլ Ալուպկայի «ճաշ տուող» տիկին Արգամակովայի անհամ կերակուրները։

Բայց սա միջանկեալ էր. դառնանք Գմունդէնին։

Թէպէտև միշտ շարժում և միշտ կեանք կայ չորս կողմը, այնուամենայնիւ ամեն ինչ հանգիստ և հանդարտ է կատարւում առանց աղմուկի և առանց այն մշտական վազվզոցի, որ մարդու գլուխ է տանում քաղաքներում և կամ մեծ բուժավայրերում։

Ինձ նման տուրիստները հազիւ են երևում Գմունդէնի լայն նաւամատոյցի վրայ, որ իւր երկու կարգ շագանակի ծառերով գեղեցիկ զբօսավայր է ներկայացնում. Տուրիստները պտտում են լճի ափերին, բարձրանում են լեռները, զբօսնում են ժողովրդական և Սատորիի ծառաստաններում, նաւակով լողում են լճի վրայ, այցելում են եզերքում գտնուած վայրերը։ Կամ անցնում են լեռներն ու սարերը ոտով, իջնում են ձորը և դիտում են Տրաուն գետի այն տեղը, ուր նա ահագին բարձրութիւնից ընկնում է անդունդը, արդէն ոչ իբրև գետ, այլ իբրև մի ահագին սպիտակ փրփուր, մէկը միւսի վրայ համող ալիքներով, որոնք ցած ընկնելով ջրի կաթիլներ են ցողում հեռու և բարձր։ Բաւականին հեռու և բաւականին բարձր կանգնած՝ ես մի րոպէի մէջ թրջուեցի, կարծես անձրևի տակ։

Շրջակայքից շատ սիրուն են Տրաունկիրխէն, Ալտմիւնստէրը, Օրտի ամրոցը։ Հեռու չեն նաև աւստրիական կայսեր, Վիւրտեմբերգի դքսի, Տոսկանայի դքսուհու և այլ արքայազների պալատները։ Օրտի ամրոցը լճի փոքրիկ կղզու վրայ է և մասամբ յիշեցնում է Ժընևի լճի վրայ գտնուող Շիլիօնի ամրոցը—բերդը, որի մասին Բայրընը գրել է իր հրաշալի պոէմը։ Տրաունկիրխէի հետ կապուած սիրային վէպն էլ յիշեցրեց ինձ մեր բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի «Ախթամար» պոէման։ Պատմում են, որ անցած-գնացած դարերում այստեղ, ժայռի վրայ գտնուող վանքում արգելուած է եղել մի կոյս։ Ասպետը, որից բաժանել են այդ մատաղ կոյսին, ամեն գիշեր գալիս է եղել այցելելու իր սիրուհուն, լողալով լճի միւս ափից դէպի վանքի պարիսպը։ Քանի-քանի սիրավառ գիշերներ են նրանք անցկացրել.. բայց մի գիշեր ամպերը պատում են երկինքը, աստղերն անյայտանում են, հողմը ուռեցնում է լիճը և քաջ ասպետը մթութեան մէջ ալիքների հետ երկար կռուելուց յետոյ ուժասպառ նրանց զոհ է գնում։ Հաւատարիմ միանձնուհին չի կարողանում տանել այդ հարուածը և ալիքների մէջ է խեղդում իր վիշտը... Անցել են դարեր, բայց այդ դէպքը չի մոռացուել և պտտում է բերնէ բերան։ Մարդիկ պատմում, լսում են և զարմանում են անցած դարերի խստասրտութեան վրայ... և իրենք նոյն խստութիւնն են բանեցնում իրենց առօրեայ կեանքում։

Միայն բնութիւնն է, որ ինչպէս առաջ, այնպէս և այժմ լուռ վկայ է թէ չար, թէ բարի գործերի և իր սառնասրտութեամբ բարիքներ է թափում կամ չանթեր արձակում թէ վատ, թէ ազնիւ մարդկանց վրայ։

Այժմ էլ լուսինը լուռ ժպտում է կապոյտ երկնքից և երկայն ստուերներ է առաջացնում ծառերից, տներից, լեռներից... իսկ հսկայ Տրաուն սարը մռայլ մելամաղձութեամբ ընկղմուած ջրի մէջ՝ լուռ մտածում է անցած գնացած ժամանակների մասին—կելտերի և հռովմայեցոց մասին, որոնք յաջորդաբար տիրեցին այս տեղերին և հիմնեցին առաջին աւանները (Իշլ), հոնացոց մասին, որոնք X-րդ դարում կառուցին Ալտմիւնստերի եկեղեցին, միջնադարեան անց ու կացի մասին, երբ բարեպաշտները շինում էին Տրաունկիրխէի նման մենաստաններ, չար մարդիկ փակում էին այնտեղ իրենց զոհերին, իսկ Օրտի նման ասպետները կառուցանում էին կղզիանման ամրոցները. մտածում էր և յիշեցնում Լիւթերի օրերը և գիւղացիների պատերազմը, որի մի քանի դէպքերը կատարուած էին հէնց այս լճի ափին. յիշում էր մեծ յեղափոխութեան օրերը և Նապոլէոնի արշաւանքը, որի ժամանակ այս կողմերով էլ անցան գնացին բազմալեզու զօրքերը...

Ու դեռ շատ բան յիշեց արդէն մեր ժամանակից, որի վրայով անցնում էր արիւնէ-կարմիր ժապաւէնը և որի խորքերից լսւում էին խեղճերի, ապիկարների, նեղուածների, հարստահարուածների ձայները և աղաղակները...

Շատ բան յիշեց Տրաուն սարը և դեռ շատ բան ունէր յիշելու, բայց գիշերն անցնում էր, մթութիւնը նօսրանում. արևելքի կողմերն սկսեցին շառագունել...

Մօտ էր արշալոյսը։

Մինաս Բերբերեան

ՄԻ ՆՈՐ ՓՈՐՁ ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ

Մարդկութեան ամենամեծ թշնամիներից մէկը, յայտնի է, թոքախտ հիւանդութիւնն է։ Իւրաքանչիւր տարի միլիոնաւոր հոգիներ զոհ են գնում այդ անբուժելի ճանաչուած հիւանդութեանը։ Թոքախտի դէմ կռուելու դժուարութիւնն առաջանում է մանաւանդ այն բանից, որ այդ հիւանդութեան սկզբնական շրջանները ճանաչել շատ դժուար է, իսկ երբ թոքախտի սկզբնական շրջաններն արդէն անցել են և լուրջ կերպարանք է ստացել այն՝ մարդկային ոյժերն անզօր են հանդիսանում նրա դէմ կռուելու։ Ինչ զարմանք, որ իւրաքանչիւր մի նոր փորձ, որը ցոյց է տալիս թոքախտի դէմ կռուելու նոր միջոցներ, թէ գիտական և թէ հասարակութեան ամեն շրջաններում սրտի բաբախումով է ընդունւում։ Մի քանի տարի առաջ տարածուած այն լուրը, թէ թոքախտի դէմ արդէն արմատական միջոց է գտնուել, ընդհանուր ցնծութիւն առաջացրեց։ Բայց, դժբաղդաբար, յոյսերը չիրականացան։ Սակայն գիտութիւնը հետըզհետէ հարթեց թոքախտի դէմ կռուելու ճանապարհը, նա ցոյց տուեց, որ թոքախտի դէմ կռուելու ամենալաւ միջոցներն են հիւանդի կանոնաւոր հոգատարութիւնը, խիստ առողջապահական պայմանները։ Այդ իսկ նպատակով քաղաքակիրթ աշխարհում հիմնարկուել են բուժարաններ յատկապէս թոքախտաւորների համար։ Այդպիսի բուժարանների թիւը Գերմանիայում 50 է, որոնք ամենից առաջ բաց են ժողովրդի չքաւոր դասի առջև։

Թոքախտի դէմ միացած ոյժերով կռուելու նպատակով կազմակերպւում են նաև միջազգային բժշկական կոնգրէսներ, որոնցից վերջինը Լոնդոնում ամսիս 23-ից բացուած է։ Այդ կոնգրէսին մասնակցում են քաղաքակիրթ աշխարհի բոլոր ազգերի ներկայացուցիչները։ Կոնգրէսը բաց է արել հերցոգ Կամբրիջէ, իսկ կառավարութեան կողմից կոնգրէսին ողջունել է մինիստր Լանդսդովնէ, խոստանալով նրան ամեն տեսակ օգնութիւն և հովանաւորութիւն։ Կոնգրէսում կարդացուել են դասախօսութիւններ թոքախտի մասին. գաղտնի խորհրդական Լայդէն (Բերլինից) մի ընդհանուր զեկուցումով բացատրել է, թէ վերջին ժամանակներս ինչ չափով է առաջ գնացել Գերմանիայում կռիւը թոքախտի դէմ։ Սակայն պրոֆ. Ռոբերտ Կոխի՝ այդ կոնգրէսում կարդացած մի դասախօսութիւնն է, որ այժմ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնն է գրաւել։ Գերմանական թերթերն հեռագրական թղթակցութիւններ են հրատարակում Ռոբերտ Կոխի այդ նոր փորձի մասին։

Պրոֆ. Ռ. Կոխ բազմաթիւ փորձերով և պատուաստումներով ապացուցել է, որ անասունների թոքախտային բացիլները մարդկանց վրայ պատուաստելով վերջիններիս համար անվնաս են։

Եւ միւս կողմից անասուններն անընդունակ են մարդկանց թոքախտային բացիլների համար։ Դրանից հետևում է այն կարևոր փաստը, որ մարդկանց և անասունների բացիլները նոյն յատկութիւնը չունեն. ապա ուրեմն խախտւում է այն հայեացքը, թէ տնային անասունների բացիլները մարդկանց համար վարակիչ են։ Իսկ թէ ինչ չափով մարդկանց և անասունների թոքախտային բացիլներն իրենց ծագումով տարբեր են իրարից՝ այդ մասին քննութիւնը դեռ ևս չի վերջացել։

Կոխն սկսել է այս նոր քննութիւնը դէպի Նորգուինիա անցեալ աշնանն առած իր գիտական ճանապարհորդութիւնից վերադառնալուց յետոյ Բերլինի կենդանաբանական բարձրագոյն դպրոցի կենդանանոցում կատարած մի շարք փորձնական քննութիւններով եկել է նա այն կարևոր եզրակացութեան, թէ մարդկանց և անասունների թոքախտային բացիլները բոլորովին տարբեր են իրարից, հետևապէս՝ մարդկանց և անասունների թոքախտները նոյն հիւանդութիւնները չեն։ Իւր հետազօտութիւնների հետևանքները ներկայացրել է նա առաջնակարգ մասնագէտներից - որոնց թւում նաև յայտնի պրոֆ. Ռուդոլֆ Վիրխով—բաղկացած մի յանձնաժողովի քննութեան։

Ընդհանրապէս իբրև հիմք պրոֆ. Կոխի հետազօտութիւնների ծառայում են այն կարևոր հետևանքները, որոնք ստացուել են ուրիշ, նմանապէս վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուելու փորձերից։ Խոլերայի դէմ, օրինակ, կռուելու ամենալաւ և անհրաժեշտ միջոցն է մարդկանց խմելու ջրի գործածութեան պայմանները լաւացնել։ Այսպէս և թոքախտն անցնում է մէկ մարդուց միւսին արտաթորութեան միջոցով, ամենից առաջ։ Ուստի և այդ հիւանդութեան դէմ կռուելու ամենաանհրաժեշտ պայմանն է թոքախտաւորներին կատարեալ առողջապահական պայմանների մէջ դնելը։ Չքաւոր դասի մէջ, որտեղ կանոնաւոր առողջապահութիւն չկայ, աւելի շատ է տարածւում թոքախտը։ Ուստի պէտք է աշխատել նախ այդ դասի բնակարանները լաւացնել։ Որպէսզի թոքախտաւորն ուրիշներին էլ չվարակէ, պէտք է նրան բուժարան տանել և այնտեղ պահել։ Դրանից ծագում է թոքախտաւորների համար բուժարաններ հիմնելու խնդիրը, եղածների թիւը բազմացնելը։ Անգլիայում թոքախտն ամենապակաս զոհեր է տալիս, որովհետև թոքախտաւորների համար աւելի բուժարաններ ունէ, քան ուրիշ երկրներ։ Թոքախտն իր սկզբնաւորութեան շրջաններում բուժելի է. Գերմանիայում տարեկան չորս հազար թոքախտաւորներ ապաքինւում են։ Նիւ-Եօրքում, ձեռք առնուած լաւ միջոցների շնորհիւ, 1886 թուականից այս կող՛մ թոքախտով մեռնողների թիւը 35% ով իջել է։ Խիստ կարևոր է նաև այն հանգամանքը, որ ժողովրդին պէտք է հասկացնել այս հիւանդութեան էութիւնը։

Գործնական կեանքում ամեն կողմից խիստ կարևոր նշանակութիւն ունէ Ռ. Կոխի այս նոր փորձը։ Ամենից առաջ մարդկութիւնն այլ ևս երկիւղ չի ունենալ, թէ կարող է կենդանիների թոքախտային բացիլներից, օրինակ կովի կաթի միջոցով, վարակուել։ Կարևոր նշանակութիւն ունէ այն նաև գիւղատնտեսութեան համար։

Ցանկանք, որ գիտութիւնը նորանոր միջոցներ գտնէ դեռ ևս ոչ բոլորովին լուսաբանուած թոքախտի դէմ կռուելու համար, որն անխնայ այնքան առողջ և կենսունակ ոյժեր է տապալում։

Ար. Աբեղեան

Մարբուրգ (Գերմանիա), 25 յուլ. (ն. տ.)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

«Օսմանլի» լրագիրը հաղորդում է, որ Լոնդոնի Թուրք դեսպան Կոստակի փաշան, անգլիական թագաւորի մօտ ունեցած ունկնդրութեան ժամանակ, Էդուարդ VII-ին է յանձնել սուլթանի սեպհական ձեռքով գրուած մի նամակ և անգլիական թագաւորի աջակցութիւնն է խնդրել միջոցներ ձեռք առնելու Անգլիա գաղթած երիտասարդ Թուրքերի ագիտացիայի և Թուրք կայսրութեան մէջ գործող «ուրիշ խռովարարներին» զէնք ու ռազմամթերք մատակարարելուն դէմ։ Բացի դրանից Կոստակի-փաշան խնդրել է լորդ Կրոմերին հարկաւոր հրահանգները տալ Եգիպտոսում Թուրք յեղափոխական կոմիտետների ազատ գործունէութիւնն ու պրոպագանդան սահմանափակելու համար։ «Շատ լաւ ծանօթ լինելով անգլիական կառավարութեան սահմանադրական օրէնքներին,—նկատում է «Օսմանլի»-ն,—Կոստակի-փաշան, ի հարկէ, գիտէր, թէ որքան անտեղի էր անգլիական թագաւորից այդպիսի բան խնդրելը, բայց նա ուրիշ ոչինչ չէր կարող անել, որովհետև, եթէ սուլթանի հրամանը չլսէր, Կոստակի-փաշան կասկած կյարուցանէր, թէ ինքն ևս համախոհ է երիտասարդ Թուրքերի հետ, մանաւանդ որ նա յոյն է ծագումով և շատ հեշտութեամբ կարող է Ստամբոլի արտակարգ դատարանով դատապարտուող քաղաքական յանցաւորների կարգն անցնել»։

— Բելգրադից «Köln Zeit.»-ին հաղորդում են, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան պ. Զինովիեւ եռանդուն բողոքի շնորհիւ սուլթանը հեռագրով հրամայել է դադարեցնել Հին Սերբիայում սերբերի մօտ կատարուող խուզարկութիւնները և արձակել պաշտօնից Պրիշտինի միւթէսարիֆ Ջեմալ բէյին։ Իւսքուբի ռուսաց հիւպատոս Մաշկովը գտնւում է Կոլաշինում, որտեղ ալբանացիներն ամենից աւելի կատաղի վայրագութիւններ են գործում, և այդտեղից դիտում է անցքերը։

ՉԻՆԱՍՏԱՆ

Պեկինի Ֆրանսիական նախկին դեսպան Պիշոնը վերադարձել է Ֆրանսիա։ Պատասխանելով իրեն դիմող լրագրողների հարցմունքներին, նա ասել է, ի միջի այլոց, թէ պետութիւնները շատ էլ խիստ չպիտի վարուեն չինացիների հետ, որովհետև վերջիններս կարող են վրէժ առնել։ Ինչ վերաբերում է «դեղին վտանգին», Պիշոնը չի հաւատում այդ բանին գոնէ չինացիների վերաբերմամբ, որովհետև դեռ ևս շատ տարիներ են պէտք, որ Չինաստանը կարողանայ որևէ վտանգ սպառնալ Եւրոպային։ Բայց, Պիշոնի կարծիքով, այդ վտանգը և մեծ չափով սպառնում է Ճափոնիան, որը կարող կլինէր գլուխ անցնել դեղին ցեղին և իր ետևից քարշ տալ Չինաստանին Եւրոպայի վրայ արշաւելու համար։ Չինաստանում զանազան պետութիւնների ունեցած դիրքի մասին Պիշոնն ասել է, որ Անգլիան առաջուայ պէս ամենախոշոր ծովային ու առևտրական պետութիւնն է այդ երկրում, բայց Գերմանիան, Ֆրանսիան և Ճափոնիան արդէն սկսում են մրցել նրա հետ առաջնութիւնը նրանից խլելու համար։ Սակայն Չինաստանում ամենքի համար էլ տեղ կգտնուի. Ռուսիայի մասին նա ակնարկել է հետևեալ խօսքերով. «Ծայրագոյն արևելքում դեռ ևս շատ անլուծելի խնդիրներ կան և, ի միջի այլոց, դեռ ևս հեռացուած չէ այն վտանգը, որով կարող է ընդհարում տեղի ունենալ ասիական մի պատանի պետութեան և Ասիայում մեծ շահեր ունեցող եւրոպական մի մեծ պետութեան միջև։ Ըստ մեզ Ֆրանսիան կարող էր նշանաւոր դեր կատարել. նա դաշնակից է եւրոպական այդ պետութեան հետ և բարեկամ է ասիական յիշեալ պետութեան. Ֆրանսիան կարող էր միջնորդի դեր կատարել և դրանով նպաստել քաղաքակրթութեանը պահպանելով խաղաղութիւնը»։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Գերի բոէրների մասին Պրետորիայից գրում են «Pester Lloyd»-ին. «Յայտնի չէ, ինչ են անում անգլիացիները ծանր վիրաւորուած գերի բոէրներին, բայց յայտնի է, որ Պրետորիայի հիւանդանոցներում արդէն 6—8 ամիս է, որ ոչ մի բոէր չի եղել։ Անցած տարուայ աշնանը,—շարունակում է թղթակիցը,—ինձ հետ գերի էր բռնուած ծանր վիրաւորուած մի բոէր նա մեռաւ առաջին կայարանը հասած ժամանակ, ճանապարհին խիստ տանջանքներ կրելուց յետոյ։ Այն դժբաղդները, որոնց վէրքերը չեն կարողանում կապել բոէր բժիշկները, մեծ մասամբ արնաքամ են լինում։ Դէպի բոէրները ցոյց տուած անհոգ վերաբերմունքն ամենից աւելի աչքի է ընկնում բուրգերների այն բանակներում, որտեղ պահւում են բոէր ընտանիքները։ Մարդ այն տպաւորութիւնն է ստանում, որ կարծես թէ ուզում են մահացնել բոլոր ժողովուրդը։ Հէնց այդ նպատակով էլ շինուած է Երենէի մօտ գտնուած բանակը։ Ընտանիքների մեծ մասը թափուած է վրանների մէջ գետնի վրայ և գիշերուայ ցրտից պաշտպանւում է միայն զինուորական բարակ վերմակների տակ։ Նրանց հետ վարւում են իբրև գերիների հետ։ Բանակը պահպանւում է զինուորներով»։

— «Daily Mail»-ի ասելով, երբ Կրիւգերն իր կնոջ մահուան գոյժն առաւ, դառնապէս լաց եղաւ և ասաց. «Մենք ապրում էինք իբրև հոգեկիցներ և երբէք չենք կռուել իրար հետ։ Միակ տարաձայնութիւնը, որ եղել է մեր միջև, դա մեր պսակից վեց ամիս յետոյ էր»։ Հանգուցեալը Կրիւգերի երկրորդ կինն էր, որից ունեցել էր 16 զաւակ. դրանցից կենդանի են մնացել միայն եօթը։ Պատերազմի սկզբում նախագահի զաւակներից հինգը գնացել էին կռուի վայրը։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հրատարակուած է հետևեալ հրամանը. «Սոյն տարուայ մայիսի 23-ին արևելեան-սիբիրական հրացանաձիգ գնդի զինուոր Ալէքսէյ Սերգեևսկի, Մոսկուայի կայսերական պալատի դռների մօտ պահապան կանգնած ժամանակ, մի անյայտ անձից գնդակով վէրք ստացաւ ձեռքին։ Չնայելով խիստ ցաւին և արիւն կորցնելուն, հրացանաձիգ Սերգեևսկի մնաց իր տեղում, պահպանելով իր դիրքը, մինչև որ փոխուեց։ Սոյն տարուայ յուլիսի 12 ին Բաթումում Միքայէլեան բերդի A. մարտկոցում պատահած պայթումից, ի միջի այլոց, սպանուած էին պահնորդների գլխաւորն ու պահնորդներին փոխող զինուորը։ Այս պատճառով պահնորդ ամբաձիգ Եգոր Բուցըկին չթողեց իր դիրքը և փոխուեց միայն այդ մասին Բարձրագոյն հրաման ստացուելուց յետոյ, իր դիրքում $14\frac{1}{2}$ ժամ շարունակ ծառայելուց վերջ։ Վերոյիշեալ դէպքերի մասին Թագաւոր Կայսրին զեկուցելուց յետոյ, Նորին Մեծութիւնը Բարձրագոյնս հաճեց Արքայական շնորհակալութիւն յայտարարել Սերգեևսկուն և շնորհել նրան արծաթեայ մեդալ կրելու համար կրծքի վրայ գէորգեան ժապաւէնով իսկ քաջ ամբաձիգ Բուցըկինին ոսկեայ մեդալ գէորգեան ժապաւէնով կրծքի վրայ կրելու համար։ Այս մասին յայտարարւում է զինուորական շրջանին այն նկատմամբ, որ, թէև վերոյիշեալ դէպքերին նման դէպքերը բացառիկ չեն մեր զօրքում, բայց և այնպէս դրանք պայծառ օրինակներ են հաստատուն դիսցիպլինայի և դէպի ծառայական պարտքը գիտակցօրէն վերաբերուելուն, որոնք չեն կարող խանգարուել նոյն իսկ բացառիկ հանգամանքներից»։

—Յուլիսի 23-ին, օրուայ ժամը $6\frac{1}{2}$-ին, Ֆրիդրիխս-հոֆում վախճանուեց Վիկտորիա կայսրուհին, Վիլհելմ կայսրի մայրը։ Գերմանական և օտարերկրեայ բոլոր պետերից ջերմ ցաւակցութեան հեռագրներ են ստացուած, դրանց թւում ռուսաց Կայսրից, անգլիական թագաւորից, իտալական թագաւորից և նախագահ Լուբէից։

—Սուլթանի մօտ ռուսաց դեսպանի ունեցած վերջին ունկնդրութեան ժամանակ խօսակցութիւնը վերաբերում էր Հին Սերբիայի դրութեանը։ Դեսպանը յոյս յայտնեց, որ Դուռը կըջանայ անդորրութիւնը պահպանել այդ գաւառներում։ Սուլթանը պատասխանեց, որ այդ նպատակին հասնելու բոլոր միջոցներն արդէն ձեռք են առնուած, և դեսպաններին հանգստացուցիչ խոստումներ տուեց։

—Ֆրանսիայի Ներկայացուցիչը Պեկինում մի հաղորդագրութիւն է ստացել, որ Ֆրանսիան մտադիր է անմիջական երկաթուղի շինել Պաոտինֆուից դէպի Թեանձին, Չինաստանը համաձայն լինի թէ ոչ—միևնոյն է։ Պեկինից օտարերկրեայ զօրքերի հեռացման պատրաստութիւնները դժգոհութիւն են յարուցանում Պեկինի օտարերկրացի բնակիչների մէջ։ Նրանք ասում են, որ ստորին դասակարգերն այժմէն իսկ թշնամանում են, որովհետև զօրքերը պատրաստւում են հեռանալ քաղաքից, և թէ չինացիները, ըստ վաղեմի սովորութեան, նորից վիրաւորում են օտարերկրացիներին փողոցներում։

— Պարիզից հեռագրում են, թէ լսւում է, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութեան մէջ քննւում է Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կոնստանի առաջարկն այն մասին, որ իրեն յետս կոչեն Կ. Պոլսից և Մունիր-բէյի անցագրերն էլ իրեն յանձնեն Կ. Պոլսի «Quais et Chantiers» ընկերութեան վերաբերմամբ ծագած դժուարութիւնների պատճառով։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ՝

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(1901 թ. մայիսի 6-ից)

Ժամերը նշանակւում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը։

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը) 9 ժ. 17 ր. (10 ժ. 15 ր.) առ., հասնում է Բագու 10 ժ. 40 ր. (11 ժամ 38 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է հինգշաբթի օրերը 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.) առ., Թիֆլիս հասնում է 7 ժ. 25 ր. (8 ժ. 23 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) առ., հասնում է Բաթում 7 ժ. 58 ր. (8 ժ. 56 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 2 Բաթումից Թիֆլիս մեկնում է 9 ժ. 45 ր. (10 ժ. 43 ր.) եր., հասնում է Թիֆլիս 7 ժ. 57 ր. (8 ժ. 55 ր.) առ.։

Պոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) եր., Թիֆլիս հասնում է 4 ժ. 13 ր. (5 ժ. 11 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 5 ժ. 27 ր. (6 ժ. 25 ր) եր., Բաթում հասնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 12 ժ. 27 ր. (1 ժ. 25 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 5 ժ. 51 ր. (6 ժ. 49 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր) առ., Բաթում հասնում է 6 ժ. 48 ր. (7 ժ. 46 ր.) եր.։

Պոստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 17 ր. (11 ժ. 15 ր.) եր., Թիֆլիս է հասնում 10 ժ. 40 ր. (11 ժ. 38 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 11 ժ. 48 ր. (12 ժ. 46 ր.) ցերեկուայ, հասնում է Բագու 5 ժ. 40 ր. (6 ժ. 38 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 15 ր. (9 ժ. 13 ր.) առ., հասնում է Թիֆլիս 7 ժ. 38 ր. (8 ժ. 36 ր.) երեկոյեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 8 ժ. 18 ր. (9 ժ. 16 ր.) եր., Բագու հասնում է 12 ժ. 40 ր. (1 ժ. 38 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) եր., հասնում է Սանահին 2 ժ. 56 ր. (3 ժ. 54 ր.), Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Կարսից Թիֆլիս մեկնում է 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապոլ 7 ժ 40 ր. (8 ժ. 38 ր.) եր., Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Սանահին—1 ժ. 15 ր (2 ժ. 13 ր.) գիշ., Թիֆլիս—6 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.) առ.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Թիֆլիսից Ղարաքիլիսա մեկնում է 8 ժ. 10 ր. (9 ժ. 8 ր.) առ., հասնում է Սանահին 3 ժ. 55 ր. (4 ժ. 53 ր.), Ղարաքիլիսա—7 ժ. 28 ր. (8 ժ. 26 ր.) եր.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Ղարաքլիսայից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 ր.) առ., հասնում է Սանահին 8 ժ. 57 ր. (9 ժ. 55 ր.) առ., Թիֆլիս—6 ժ. 05 ր. (7 ժ. 03 ր.) եր.։

Թիֆլիս Բորժոմ

Մարդատար գնացքը № 7 Թիֆլիսից Բորժոմ մեկնում է 1 ժ. 40 ր. (2 ժ. 38 ր.) ցերեկուայ, հասնում է Մցխէթ 2 ժ. 16 ր. (3 ժ. 14 ր.), Գորի—3 ժ. 37 ր (4 ժ. 45 ր.), Միխայլովո—4 ժ. 59 ր. (5 ժ. 57 ր.), Բորժոմ—6 ժ. 40 ր. (7 ժ. 38 ր.) եր.։

Մարդատար գնացքը № 8 Բորժոմից Թիֆլիս մեկնում է 1 ժ. 5 ր. (2 ժ. 3 ր) գիշ., հասնում է Միխայլովո 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), Գորի—4 ժ. 29 ր. (5 ժ. 27 ր.), Մցխէթ—6 ժ. 2 ր. (7 ժ.), Թիֆլիս—6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) առ.։

Մցխէթ-Թիֆլիս

Ամառային գնացքը № 18 Մցխէթից Թիֆլիս մեկնում է 5 ժ. 22 ր. (6 ժ. 20 ր.) եր., հասնում է Թիֆլիս 6 ժ. 01 ր. (6 ժ. 59 ր.) եր.։

Միխայլովո Թիֆլիս

Ամառային գնացքը № 20 Միխայլովոյից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր.) եր., հասնում է Գորի 7 ժ. 55 ր. (8 ժ. 53 ր), Մցխէթ—9 ժ. 31 ր. (10 ժ. 29 ր.), Թիֆլիս—10 ժ. 14 ր. (11 ժ. 12 ր.) եր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծերութեան հասակը թևակոխած մարդկանց բերանը ողողելու համար մի իսկական բարիք է Օդոլը՝ շնորհիւ այս բանի, լնդերքն ամրանում է և պնդանում, իսկ բերանի ամբողջ խոռոչները Օդոլով իւրաքանչիւր անգամ ողողելուց յետոյ, բերանում տիրում է կենդանաբար թարմութիւն։

$^1/_1$ սրուակը, որը բաւական է մի քանի ամիս,
(M.) 313 արժէ 1 ր. 50 կ. 1—1

ԵՐԵՔ ՍԵՆԵԱԿ

Խոհանոցով և Նկուղով վարձու է տրւում Մալո-Օրբելեանովսկայա փողոցում, Կարախանեանի № 9 տան մէջ։
(694) 1—1

Նոր դասագիրք
Յովհ. Արարաջեանի
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
առաջին տարի
բազմաթիւ պատկերներով
Գինն է 30 կոպ.
Александрополь, книгопродавцу Степанянцъ. Գումարով գնողներին զիջումն։
(692) 2—2

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԵԾ ՍԱԼԱ գիւղի ծխական դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՅԵՆՋԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ունենալու է երգեցողութեան դասեր ևս. ռոճիկ 300 ր., բնակարան և վառելիք։ Մանրամասնութիւնների համար դիմել հետևեալ հասցէով՝ Нахичевань на Дону село Большіе Салы, священнику Алексіаносу Чораянцъ.
(683) 6—4

Մամուլի տակ է և մինչև սեպտեմբերի վերջը լոյս կըտեսնի Վ. Փափազեանի

,,ԷՄՄԱ‘‘ վէպը

350—400 մեծադիր երես

Վաղօրօք բաժանորդ գրուողների համար ճանապարհածախսով 1 ր.։ Լոյս տեսնելուց յետոյ կլինի ճանապարհածախսով 1 ր. 25 կ.։

Բաժանորդ կարելի է գրուել Բագւում պ. Ս. Օհանջանեանցի մօտ՝ Магазинъ бывшій Л. П. Петросянъ, կամ պ. Ի. Մելիքեանի մօտ՝ Фотографія „Рембрандтъ“ Торговая Բալախանում՝ պ Իշխան Միրզաբէկեանի մօտ՝ А. Меликовъ и Ко Բիբի Հէյբաթում՝ պ. Արշակ Տէր Յովհաննիսեանի մօտ՝ Бр. Набатовы и Ко. Շուշում պ. Ղազար Տէր Ղազարեանի մօտ։ Թիֆլիսում պ. Արշակ Մեհրաբեանի մօտ՝ «Տարազ» շաբաթաթերթի խմբագրատանը։
(688) 3—2

Թանդոյեան եկեղեցու համար հարկաւոր է

ԵՐԿՈՒ ՁԱՅՆԱԳՐԱԳԷՏ,

յաջող ձայն ունեցող տիրացու։ Երէցփոխ՝ Մաշ. Տէր-Մարգարեանց
(690) 2—2

КАПИЛЛЕРИНЪ
НОВОЕ
СОВЕРШЕННО
БЕЗВРЕДНОЕ СРЕДСТВО
ВОЗВРАЩАЕТЪ СѢДЫМЪ
ВОЛОСАМЪ
ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ
ЦѢНА 2 РУБ.
А. СІУ и Ко.
(M.)№ 116818 26—25

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՖԼՈՐԱ ԵԱԿՈՎԼԵՒՆԱ
ԲՐՈՆ-ՖՈՆ-ԲՐԵՆՆԵՐ
Ընդունում է առաւօտեան ժ. 9—2, երեկոյեան ժ. 4—7
ԹԻՖԼԻՍ, Միխայլովսկայա, № 71։
(471) 50-9

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ

համար հարկաւոր են մի ուսուցիչ ռուսաց լեզուի, մի աստուածաբան կրօնական առարկաների և մի ուրիշը հայոց լեզուի, մատենագրութեան և եկեղեցական պատմութեան համար։

Ռուսաց լեզուի համար պահանջւում է համալսարանի կամ ինստիտուտի վկայական, միւս առարկաների համար արտասահմանի կամ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վկայական։

Դպրանոցի հոգաբարձութիւնը և տեսուչը խնդրում են ցանկացողներին դիմել փութով տեսչին՝ պայմանների մասին տեղեկանալու և պայմանաւորուելու։

Տեսչի ժամանակաւոր հասցէն. Թիֆլիս, Ս. Սարգսի վանք։
Ի տեղի Նախագահի հոգաբարձութեան՝
Գարեգին աւագ քահ. Յովհաննիսեան
Տեսուչ դպրանոցի՝ Բենիկ Վարդապետ
(687) 5—3

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

մաթեմատիկական առարկաների համար հարկաւոր է համալսարանաւարտ մի ուսուցիչ շաբաթական 18 դասով. ռոճիկը 1500 րուբլի։

Ցանկացողները կարող են դիմել Թիֆլիս, Ս. Սարգիս, Գարեգին վարդապետ Յովսէփեանին։
(684) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իւր առեանում օրուայ ժամը 12-ին, յուլիսի 28-ին տեղի կունենայ աճուրդ վերաշինելու կոյուղին բետոնով 0,375×0,25 սաժէն երկարութեամբ մօտաւորապէս 62,00 սաժէն արդէն գոյութիւն ունեցող կոյուղուց Վողովոզնոյի փողոցից մինչև Սապեօրնի փոքրիկ փողոցը 1154 րուբլի գումարով։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմաններին կարող են տեղեկանալ քաղ. վարչութեան շինարարական բաժնում ամեն լի օր ժամը 9-ից մինչև օրուայ 3-ը։
(693) 3—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԹԻՖԼԻՍ, ԼԵՐՄՈՆՏՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, № 9

Ցանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքն աւարտած աշակերտների և աշակերտուհիների՝ թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին՝ Ս. Մանուէլեանցին։ Աւարտողներն ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրինաւոր ատտեստատներ։

Ընդունելութիւններն սկսուելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ձրիաբար եղբ. Ծովեանովների բանկային գրասենեակում և Կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտար քաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэльянцу. (650) 12—5

ՆՈՐՈՒԹԻՒՆ!!



Ամբողջ աշխարհում մենաշնորհուած

Հետաքրքրական բրելոկ ,,**ԱՏՐՃԱՆԱԿ**‘‘

Այս ատրճանակը գեղեցիկ բրելոկ լինելուց զատ տալիս է նաև մի որոշ օգուտ։ Սոյն ատրճանակ բրելոկն իւր փոքր դիրքով ունի իսկական մեծ ատրճանակի տեսք, գործում է զերազանց և լցւում է խիստ մանրիկ փամփուշտներով, որոնք շատ բարձր ձայն են հանում։ Այս բրելոկով կարելի է հեշտութեամբ վախեցնել գողին, որը չի կարող երևակայել, թէ այդ զէնքն անվնաս է։ Մէկ ատրճանակ-բրելոկի գինը, ճանապարհածախսով հանդերձ, 2 րուբլի է։ Դիմել՝ „Базаръ Новостей“, Варшава, Граничная, 4.

Խրատները կուզարկուեն հետը։ Նամակները գրել ռուսերէն լեզուով։ (M.) 111309 3—1

Պարիզում լոյս տեսաւ և յուլիսի 14-ին բոլոր բաժանորդներին ուղարկուեց

,,ԺԱՄԱՆԱԿ‘‘

հանդէսը, բաղկացած 88 երեսներից.

Բովանդակութիւն —1) Նոր հանդիսի գոյութեան իրաւունքը—Խմբագրութիւն, 2) Երկրի ձայնը, պատմուածք— Վ. Փափազեանի, 3) Քնար, բանաստեղծ. - Աէգան. Զարոնի, 4) Ապոլլոն Մայկով, քննադր.—Ս. Հ., 5) Քլերմոնի ժողովը, պոէմ.—Ապոլլոն Մայկովի, 6) «Վարժապետը», պատկեր—Պ. Պռօշեանցի

Ճոխակ ներսական գրականութեան

7) Թերժէ Վիժէն—պօէմ. Հենրիկ Իբսէնի. 8) Ռումէնի բաղը, պատմուածք Ա. Կապիսի. 9) Արման Սիլվեստր (քննադր.) Ս. Հ., 10) Վերջին տենչանք, բանաստեղծութիւն Արման Սիլվեստրի։

Գիտական բաժին

11) Գիտութեան արժէքը—Մ. Պաղասարեան, 12) Երազների ուսումնական մեկնութիւնը—Ս. Մանդինեան, 13) Ֆրանսիական բժշկական ակադեմիան և գաղղիական ախտը - N.

Մամուլ

14) Հայկական մամուլ—Ահրիման, 15) Նամակ խմբագրին—բժշկապետ Բ. Նաւասարդեան, 16) Քաղաքական—Z, 17) Ստացուած գրքեր, 18) «Ժամանակ» ի սուրհանդակ, 19) Ընթերցողներին։

Պատկերներ

1) Ապոլլոն Մայկով. 2) Հենրիկ Իբսէն. 3) Թերժէի գերեզմանը. 4) Արման Սիլվեստր։

«Ժամանակ»ը տպագրուած է Revue des Revues հանդէսի գիրքով ընտիր շքեղ թղթի վրայ։

,Ժամանակ՚ի խմբագրութիւնը նախազգուշացնում է բաժանորդներին, որ եթէ նրանք Ռուսիայում մի քանի օրով ուշ ստանան համարը, այդ կառաջանայ միայն օրինական ձևականութիւններ կատարելու անհրաժեշտութիւնից։

Թիֆլիսում և ամբողջ Կովկասում ,Ժամանակ՚-ի բաժանորդ գրուելու համար [illegible] դիմել [illegible] Պարիզ խմբագրութեան կամ Թիֆլիս Կեդրոնական և Զուբալովի Գրիգորեան գրավաճառանոցներին։

Խմբագրութեան հասցէն.
64, rue Claude Bernard, Paris.
Directeur de la Revue ,,Jamanak‘‘
S. Hakhoumian

«Ժամանակ»ը բոլոր բաժանորդներին Պարիզից ուղարկուել է յուլիս 14-ին յատուկ [illegible] մէջ ծրարուած։ Խմբագրութիւնը խնդրում է մի [illegible] նամակով յայտնել [illegible] № ի [illegible]
(Փ) 3—1

Дов. цензурою Тифлисъ, 1901 г іюля 26-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387